



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՄԵՆԱՄԱՐ ԲՈՒՄԻՆԻՆԻ
ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ



ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ԻՆՆԵՐՐՈՐԴ

14 ՅՈՒՂԻՍ 1872



ԿՈՄՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ՝ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
= 1872 =

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԽԹ.

14 ՅՈՒԼԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՖ. (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացում ընտրութեան Սզգ. վարչութեան Քաղ. Ժողովոյ
2. Ընտրութիւն նորոգ դիւանի Ընդհ. Ժողովոյ
3. Կոնդակ վեհ. Կաթուղիկոսի
4. Ատենական կանոնադրութիւն
5. Կաթուղիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք
6. Հարցում ինն Երեսփոխանաց

Ատենապետ էֆ. Ատենը բացաւ ժամը 7 1/2 ին՝ երբ Յ1 Երեսփոխանք ներկայ էին, և մեծագոյն մաս զոյանալու համար Յ թիւ միայն կը սլակէր. բայց հետզհետէ եկող Երեսփոխաններով Ժողովոյն մեծամասնութիւնը շուտով լրացաւ, ներկայութեան վերջին թիւը Յ2 ի յանդերձ :

Ատենադպիր Յ Մէրեէմ-Գուլի էֆ. բացակայ լինելուն պատճառաւ, Նախագահ Ս. Հօր հրաւիրմամբ և Ժողովոյն հաւանութեամբ Յ. Կրճիկեան էֆ. առժամանակեայ Ատենադպիր կարգեցաւ :

Ատենապետ էֆ. յայտարարեց նախ՝ թէ Ազգ. Երեսփոխաններէն Տ. Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ տկարութեան պատճառաւ բացակայ

լինելը զրով ծանուցած է դիւանին, Երկրորդ՝ յիշեցնելով թէ Տ. Խորէն քահանայ ֆէլիքսականի հրածարագիրը՝ որ նախորդ նիստի Ժողովոյն ներկայացուած, բայց Ժողովը մեծամասնութիւն չունենալուն պատճառաւ անորոշ մնացած էր, կը հրաւիրէ զԺողովն որ այս հրածարականի մասին իւր կարծիքը յայտնէ :

Խօսատարեան Օ. էֆ. ի հարցման վրայ դիւանը կը բացատրէ թէ Տ. Խորէն քահանայն՝ իւր թաղին ազգիկանց վարժարանին մէջ ամենօրեայ դասախօսութեան պաշտօնն ունենալուն պատճառաւ հրածարած է :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էֆ. — Ուրեմն կը խընդրեմք Ս. Պատրիարքէն զրեւնոյն թաղի Քաղ. Խորհրդոյն՝ որ թոյլտուութիւն ընէ յիշեալ

քահանային գոնէ տասն և հինգ օրն անգամ մը ներկայ դառնուելու ընդհ. ժողովոյ նիստերուն : որպէս զի նոր ընտրութեան հարկ չը մնայ :

Այս առաջարկութիւնը ժողովոյն հաւանութիւնը ստանալով : Տ. Խորէն քահանային հրաժարականը չընդունուի : և կորուսի որ Սրբազան նախագահին կողմէ պէտք եղած նա. մակը զբաւ թագ. խորհրդոյն :

ՎՍԻՆԵՐԱՅՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՈՋԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱԳ. ԺՈՂՈՎՈՅ

Ատենապետ էֆ. Քաղ. ժողովոյ ընտրութեան տեղեկագիրը՝ որ Գործադիր Մասնաժողովոյ կողմէ մատուցուած էր դիւանին : ժողովոյն ներկայացնելով կը կարգայ : որոյ պատճէնն ահաւաստիկ :

ՏԵՂԵԿԱԳԻՐ

7 Յուլիս 1872

Պատկառելի ժողովդ քեր նախընթաց խնայուն մէջ Ազգ. վարչութեան Քաղ. ժողովոյ նորոգ ընտրութեան ձեռնարկելով 63 Երեսօխտանաց մասնակցութեամբը քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգ. վարչութեան Քաղ. ժողովոյ անգամ ընտրեց :

Գարակէօղեան կարապետ էֆ. քուէ	47
Հալաճեան Բարսեղ	36
Ապրո Սահակ	34
Պոյաճեան Յովհաննէս	34

Մնացեալ 10 անդամոց ընտրութեան համար : ըստ որում ժողովոյն նոյն օրն առաւելագոյն քուէ ստացողներէն հետեւեալ երկուստիկ ցանկը պատրաստուելով՝ անոյն 3 ին Ս. Պատրիարք Հօր կողմէ Երեսօխտանաց հաշորդուեցաւ :

Ստեփան փաշայ	25
Սրապեան Սարգիս	21
Ստեփան փաշայ	25
Սրապեան Սարգիս	21
Ստեփան փաշայ	25
Սրապեան Սարգիս	21
Ստեփան փաշայ	25
Սրապեան Սարգիս	21
Ստեփան փաշայ	25
Սրապեան Սարգիս	21

Օտեան Գրիգոր	էֆ.	24
Խօրասանձեան Ալիքսան	,	21
Տատեան Յարութիւն	,	23
Քիւրճիկեան Բարթող	,	22
Խանտանեան Յակոբ պէյ	,	19
Ստեփան փաշայ	,	18
Ստիմարաճեան Գէորգ	,	16
Մաքսուտեան Ակպուհ	,	16
Խօճասարեան Օղսէն	,	16
Սրապեան Սարգիս	,	14
Փափագեան Պետրոս	,	14

Եւ երկուսն հինգը ընտրութի օրն ընդհ. ժողովոյ դիւանին և յատկապէս ընտրեալ յանձնաժողովոյն հսկողութեան ներքեւ քուէարկութիւն և քուէհամար կատարուելով : քուէարկութեան մասնակցեցան 32 երեսօխտանք անձամբ և 37 երեսօխտանք քուէնամակաւ : ընդամէնը 89 քուէ : որոց արդիւնքն հետեւեալն եղաւ :

Խօրասանձեան Ալիքսան	էֆէնտի	66
Մերեւի-Գուլի Յարութիւն	,	58
Կրճիկեան Յովհաննէս	,	58
Քիւրճիկեան Բարթող	,	55
Փափագեան Ստեփան	,	54
Գարակէօղեան Գրիգոր	,	53
Յակոբեան Միքայէլ	,	49
Ղազարոսեան Քրիստոստ.	,	48
Մանուկեան Սենեքերիմ	,	47
Աղարէկեան Սարգիս	,	44
Խօճասարեան Օղսէն	,	44
Տատեան Յարութիւն	,	41
Խանտանեան Յակոբ պէյ	,	40
Եուսուֆեան Տիգրան	,	38
Ստիմարաճեան Գէորգ	,	38
Օտեան Գրիգոր	,	36
Մաքսուտեան Ակպուհ	,	35
Փափագեան Պետրոս	,	28
Ստեփան փաշայ	,	25
Սրապեան Սարգիս	,	21

Ըստ այսմ նորընտիր Քաղ. ժողովոյ անձամբ ընտրուած են՝

- 1. Գարակէօղեան կարապետ էֆէնտի
- 2. Հալաճեան Բարսեղ
- 3. Ապրո Սահակ
- 4. Պոյաճեան Յովհաննէս
- 5. Խօրասանձեան Ալիքսան
- 6. Մերեւի-Գուլի Յարութիւն

- 7. Կրճիկեան Յովհաննէս էֆ.
- 8. Քիւրճիկեան Բարթող
- 9. Փափագեան Ստեփան
- 10. Գարակէօղեան Գրիգոր
- 11. Յակոբեան Միքայէլ
- 12. Ղազարոսեան Քրիստոստ
- 13. Մանուկեան Սենեքերիմ
- 14. Աղարէկեան Սարգիս և Խօճասարեան էֆէնտի :

Որոց ցուցակը պատկուելի ժողովոյդ կը ներկայացնէ Դիւանս ՚ի վաւերացումն :

Դիւանս է սակայն որ Աղարէկեան Սարգիս էֆ. ի հետ Խօճասարեան Օղսէն էֆ. ալ համահաւասար քուէ ստացած է և պէտք է որ Աղարէկեան էֆ. ի երկցագոյն լինելն ստուգուի : որպէս զի իւր ընտրութիւնն օրինաց համաձայն լինի :

Երկուսն է այսօր ժամանակը խիստ սուղ լինելով կարելի եղած չէ մեզ այս պարագան ստուգել :

Յետ ընթերցման Ատենապետ էֆ. կը հրաւիրէ զերեսօխտաններն որ յիշեալ տեղեկագրոյն վրայ դիտողութիւն եթէ ունին ընեն :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ըստ որում Մասնաժողովոյն իւր տեղեկագրոյն մէջ ընտրութեան արդեանցը վրայ դիտողութիւն մը չէ ըրած : կառաջարկեմ որ այսօր վաւերացուի Քաղ. ժողովոյ ընտրութիւնը : որպէս զի Ս. Պատրիարքը հրաւիրէ զայն իւր պաշտօնին ձեռնարկելու :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Եուսուֆեան էֆ. ի առաջարկութեանը :

Ս. ՄՍՏԹԵՆՈՎ ՎԱՐԳ. ԻՋՄԻՐԼԵԱՆ. — Կարծեմ անցեալ շաբթու հրաժարագիր մը կար նորընտիր Քաղ. ժողովոյ անդամներէն մէկուն կողմէ : կարելի չէ՞ արդեօք եթէ պիտի ընդունուի նոյն հրաժարականը : անոր յաջորդն առնուլ քուէից առաւելութեան կարգաւ և ապա Քաղ. ժողովոյ ընտրութեան վաւերացումը կատարել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրդէն երկու հրաժարական նամակներ կան : մէկն անցեալ շաբթու և միւսն այս շաբթու եկած է. սակայն դիւանը հարկ չը համարիր այս հրաժարագրերն ուղարկութեան առնուլ : ըստ որում տակաւին պաշտօնապէս ընտրութիւններն իրենց չէ ծանուցուած :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տեղեկագրոյն մէջ ըսուած է որ Աղարէկեան և Խօճասարեան էֆէնտիները հաւասար քուէ ստացած են. օրէնքը կրպէ որ հաւասար քուէ ստացողներուն երկցագոյնը պէտք է առնուի : ուստի այս երկուսն երկցագոյնը որն է նէ հարկ է որոշելու :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես ինքնին կը հաստատեմ որ քան զԱղարէկեան էֆ. կըրասերագոյն եմ :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Քանի որ Օղսէն էֆ. ինքը կը վկայէ : ըսեմ է թէ Աղարէկեան էֆ. ի ընտրութիւնն որոշուած կը համարուի :

Որիչ դիտողութիւն ընող չըլլալով : Ատենապետ էֆ. քուէի կը դնէ Քաղ. ժողովոյ ընտրութիւնը : և ժողովն ընդհանուր հաւանութեամբ ընդունելով կը վաւերացնէ զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը նախագահ Սրբազան Հօր կը յանձնէ ժողովոյն որոշման համաձայն հրաւիրել նորընտիր Քաղ. ժողովոյ անդամները : որ իրենց պաշտօնին ձեռնարկեն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ես առաջուց ըսեմ որ հրաժարական եկածին պէս պիտի ընդունիմ : ինչպէս որ երեսօխտան մը երբ հրաժարի : անմիջապէս կընդունուի : բայց խնայմութիւնը չը հրաժարելն է :

ԱՂԱՋԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ եթէ նորընտիր Քաղ. ժողովն հրաժարող դառնուի : հրաժարականն ընդունուելէ առաջ յորդոր կարդացուի : կարելի է արդիւնք մը ունենայ : ինչպէս փորձով տեսնուեցաւ : երբ նախորդ Քաղ. ժողովը խմբովին հրաժարական մատուց : Ս. Պատրիարքի յորդորներն ապարդիւն չմնացին :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ասոր ժամանակն անցած է :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈԳ ԴԻՒԱՆԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղ. ժողովոյ ընտրութեան խնդրէն ետեւ անմիջապէս ընդհ. ժողովոյ նորոգ դիւանի ընտրութիւնն անցած է խնդրոց կարգին մէջ. ամենքդ ալ գիտէք որ Դիւանն սակէ առաջ ըստ օրինի հրաժարած է և իւր հրաժարականն ընդունուած : ուստի անմիջապէս նոր դիւանի ընտրութիւն պէտք է

ընել, և ասոր համար քառորդ մը միջոց բա-
ւական է կարծեմ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ ԷՖ. — Կառաջարկեմ որ
դիւանի ընտրութիւնն ալ Մասնաժողովոյ մը
ձեռք կատարուի, ինչպէս որ Քաղ. Ժողովինը
եղաւ, որպէս զի ընտրութեան համար հոս
ժամանակ չը վատնուի:

Ղազարոսեան Ք. և Տօբատր իւթիւճեան
էֆէնտիները կրկնեցին նոյն առաջարկութիւնը:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ
քուէարկութիւնը ժողովոյ մէջ կատարուի,
և քուէտուփը կնքուելով՝ քուէհամարն ուրիշ
որ մը կատարուի Մասնաժողովոյ մը ձեռք:
Այսպէս ընելով Սահմանադրութեան ալ հա-
մեմատ վարուած կըլլա՞նք, որ կըսէ թէ ընտ-
րութիւնները ժողովոյ մէջ պէտք է կատար-
ուին:

Տ. Երեմիա Եպիսկոպոս կը կրկնէ ՊԵԿԵԱՆ
էֆ. ի առաջարկութիւնը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ ԷՖ. — Սահմանադրու-
թիւնը կը տրամադրէ որ քուէարկութիւն եղած
օրը քուէհամարն ալ ըլլայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Թէև Սահմա-
նադրութիւնը կըսէ որ կրօն. և Քաղ. Ժողո-
վոց ընտրութիւններն ընդհ. ժողովոյ մէջ կա-
տարուին, բայց ասկէ առաջ վերաքննութեամբ
որոշուեցաւ որ ժողովէն դուրս ըլլայ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Որովհետև ես
ալ Սահմանադրութեան հետևողներէն եմ, կա-
ռաջարկեմ որ քուէարկութիւնը հոս ըլլայ և
քուէհամարը ժողովէն դուրս:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Քուէարկութիւնը ժո-
ղովէն դուրս կատարուելուն մէջ մեծ զեղծում-
ներ կան, ազդեցութիւններ ՚ի գործ կը շըր-
ուին քուէարկութեան վրայ. անոր համար ը-
սի թէ ժողովոյն մէջ ըլլայ, բայց եթէ քուէ-
համարն այսօր ուղուի, կրնայ ժողովէն դուրս
կատարուիլ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — ՊԵԿԵԱՆ ԷՖ. կը-
սէ թէ քուէարկութիւնը ժողովէն դուրս կա-
տարուելուն մէջ մեծ զեղծումներ կան. այդ
առարկութիւնն անհիմն կը գտնեմ. ընդհա-
կառակն ներսն ըլլայ նէ աւելի ազդեցութիւն-
ներ կը բանին, երեսփոխանը իրարու հետ կը
միանան և զիրար կը համոզեն: Ինծի համար
ներսի դրսի խնդիրն ամենեւին կարևորութիւն

մը չունի. 12 տարի է Սահմանադրական ժո-
ղովներ կընտրուին, և միշտ դուրսը ընտրուած
են. ինչ հարկ կայ այժմ այս խնդիրը յուզել,
քանի որ ուրիշ այնքան կարևոր խնդիրներ
ունինք:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քուէարկու-
թեան ներս կամ դուրսն ըլլալուն մէջ ազդե-
ցութիւն կը բանի ըսուեցաւ. ես իմ մասին
կը բողոքեմ այդ «ազդեցութիւն» բառին դէմ,
որ ո՛րչափ ալ փոքրիկ յանդիմանութիւն մ'ըլ-
լայ, տակաւին բառը շատ ծանր է երեսփո-
խանաց համար. մեք մեր կարծիքներն ուրիշի
չեմք դո՛հեր. եթէ բարեկամիս մէկն ազդեցու-
թիւն պիտի գործէ իմ քուէիս վրայ, այդ ազ-
դեցութիւնը դուրսն ալ ներսն ալ կրնայ ՚ի
գործ դնել, բայց ատոր ազդեցութիւն չըլլըր-
նար ըսուիլ: ՊԵԿԵԱՆ ԷՖ. ըսաւ թէ ամեն
ժողով քուէարկութիւնն իւր մէջ կը կատարէ,
բայց չը յիշեր թէ Եւրոպայի ժողովները տա-
րին 12 ամիս բաց են և ամեն օր կը գործեն,
մեզի պէս Յ կամ 15 օրն անգամ մը դու-
մարուող ժողովոյ համար ընտրութիւններով
զբաղին ՚ի դուր ժամանակ վատնել է. ասոր
համար աւելի աղէկ կըլլայ ուրիշ օրուան ձը-
ղել և մասնաժողովոյ մը յանձնել դիւանի ընտ-
րութիւնը:

ԶԱՐԴԱՐԵԱՆ Գ. ԷՖ. — Երեսփոխան է-
ֆէնտի ազդեցութիւն բառին դէմ բողոքեց և
իրաւունք ունի. ես ալ կը ձայնակցիմ իրեն
այս բողոքին, սակայն որովհետև ըսաւ թէ
ժամավաճառութիւն է ընտրութիւնը ժողովոյ
մէջ ընելը, ընդհակառակն ես կըսեմ թէ այս
խօսքերով աւելի ժամավաճառ կըլլա՞նք. պէտք
է ընտրութիւնը կատարեմք որ վերջանայ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կառաջարկեմ
որ քուէի դրուի, դուրսը թէ ներսն ըլլայ,
որպէս զի ժամանակ չկորուսուի:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ահաւասիկ Սահմա-
նադրութեան 37րդ յօդուածը յայտնապէս
կըսէ թէ՛ Քաղ. Ժողովոյ անդամները գաղտնի
քուէարկութեամբ և քուէից բացարձակ ա-
ռաւելութեամբ Աղբ. Ընդհ. Ժողովոյ մէջ
կընտրուին:

ՓԱՓԱԶԵԱՆ և ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԷՖ. ներ-
(ընդմիջելով) Սրդէն այդ յօդուածը վերաքն-
նուած ու սրբադրուած է:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — (շարունակելով) Զիս

ընդմիջելու իրաւունք չունիք. ըսի թէ գաղտ-
նիքներ կան, ազդեցութիւն կը բանի կոր,
պիտի յայտնեմ: Երեսփոխան էֆ. պահ մ'ա-
ռաջ բողոքեց ազդեցութիւն բառին դէմ և
երեսփոխանաց համար անարգանք է ըսաւ,
բայց ընդհակառակն կը տեսնուի որ մէկ քանի
երեսփոխաններ շատ մը տեղեր պտրտելով ի-
րենց համար Քաղ. Ժողովոյ անդամ ըլլալու
քուէ կը սահանջեն, և անոնց քուէնամակնե-
րը ծոցերին դնելով կը բերեն. ահա՛ այս ազ-
դեցութիւն բանեցնել չէ՞ մի. բայց թէ որ
ընդհ. Ժողովոյ մէջ կատարուի, սա տարբե-
րութիւնը կայ որ երբ դիս պնդէ մէկը իւր
անունը դնելու, կրնամ խտրել զինքը՝ զրեցի
ընելով, և դարձեալ իմ խոճիս կը հետևիմ
և իմ յուէթուղթս իմ ձեռքս ամենայն
ապահովութեամբ կը ձգեմ քուէտուփին
մէջ: Ահաւասիկ այսչափ տարբերութիւն
կայ քուէարկութիւնը ներսն ու դուրսը ըլլալու
մէջ: Ուստի այս այլ և այլ ազդեցութեանց
առաջն առնելը համար է որ կը պնդեմ թէ
քուէարկութիւնը հոս ժողովոյ մէջ ըլլայ-
կարծեմ այս լրամտերուս վրայ Երեսփոխան
էֆ. ալ պիտի համազուի և պիտի համամտի
ինձ քուէարկութիւնը հոս ընելու մասին:

Քիչ մ'առաջ Սահմանադրութեան 37րդ
յօդուածը յիշեցուցած ատենս՝ Փափաղեան
էֆ. նոյն յօդուածը սրբադրուած է ըսելով
սխալեցաւ. կարծեց թէ բարբոսին սրբադրու-
եցաւ, բայց այնպէս չէ. եղած սրբադրու-
թիւնն այս է որ Քաղ. Ժողովոյ անդամաց
թիւր 14ի զեղջել և ընտրութիւնը բաց ցան-
կի մը վրայ ընել որոշուեցաւ, քուէարկութիւ-
նը դարձեալ ժողովոյ մէջ ընելու պայմանաւ,
ըստ որում դուրսն ընելու համար վէճ չելաւ:
Քանի որ այս այսպէս է, կրկին կառաջարկեմ
որ գիւանի ընտրութեան քուէարկութիւնը
ժողովոյ մէջ կատարուի, բայց քուէհամարը
դուրսը լինի հսկող մասնաժողովոյ մը ձեռք:

ՆԱԽԱԳԱՃ ՍՐԲԱԶԱՆ. — Այս եղած խօս-
քերը զուտ ժամավաճառութիւն են, ինչպէս
Զարդարեան էֆ. իրաւամբ ըսաւ քիչ մ'ա-
ռաջ. դիւանի ընտրութեան համար ժամանա-
կի կորուստը պատճառ կը դնեն ոմանք Ընդհ.
Ժողովոյ մէջ կամ դուրսը կատարելու մասին
եթէ ընտրելիք անձանց թիւը շատ ըլլոր, ի-
րաւացի էր այս պատճառը, սակայն այս ընտ-
րութիւնը Քաղ. Ժողովոյ ընտրութեան շնու-
նիր, քանի որ դիւանի համար 2-3 անուն է

միայն ընտրուելիք, կրնայ քուէարկութիւնը
հոս ժողովոյ մէջ կատարուիլ, իսկ քուէհամա-
րը դուրսը՝ մասնաժողովոյ մը ձեռք:

ՇԱՏ ՄԸ ԶԱՅՆԵՐ. — Քուէի դրուի քուէի
դրուի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երբէք, կամ
ՊԵԿԵԱՆ ԷՖ. խօսքը ետ առնելու է կամ թէ
ոչ պիտի պատասխանեմ իրեն:


ՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (խօսքը Փափաղեան
էֆ. ի ուղղելով) Երբ 80-80 հոգի ՚ի ժողով
կը գումարուի, միթէ կը կարծէք որ միայն 4
հոգիի վէճը բերու համար է, այս ալ անտե-
ղի բան մ'է, երբ ժողովոյն մեծամասնու-
թիւնը քուէ կը սահանջէ, պէտք է համաձայ-
նիք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետ էֆ.
ինչո՞ւ լռեցիք՝ երբ ՊԵԿԵԱՆ ԷՖ. խնդրէն
դուրս արտաքոյ կարգի պարագաներ մէջ բե-
րաւ. թողէք որ պատասխանեմ իրեն:


ԸՆԴՄԻՉՈՒՄՆԵՐ. — Մի՛ խօսիք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — ՊԵԿԵԱՆ ԷՖ. մեծ
գաղտնիքներ ունիմ, ըսաւ, երևան հանելու.
կերևի որ Եւրոպայոյ ազդաց ընտրութեանց վը-
րոյ գաղափար չունի. եթէ Ամերիկայի կամ
Քաղղիոյ ընտրութեանց տեղեկութիւն ունե-
նար, այդ խօսքերը չպիտի բնէր: Քաղ. Ժո-
ղովոյ ընտրութեան քուէարկութիւնն սկսւած
ատենէն երկու կուսակցութիւն կար, եթէ
խառն ՚ի խառն երթային քուէները պիտի
ցրուէին. բայց կը տեսնեմք որ իւրաքանչիւր
կուսակցութիւն իր մէջ միացեր, և հաւատար
քուէ տուեր է, 10 հոգիի մէկ կողմէն քուէ,
10 հոգիի ալ միւս կողմէն քուէ. միթէ անօթ
է այս. ես ինքս հրապարակաւ հոս յայտնեցի
թէ կը փափայիմ Քաղ. Ժողովոյ անդամ ըլ-
լալ, ժողովն ալ իմ փափաքս կատարեց, շատ
չնօրհակալ եմ որ զիս ընտրելով պատուեց.
պաշտօն ուզողը պէտք է հրապարակաւ խընդ-
րէ. ինչ ըսել է գաղտնիք, ինչ ըսել է ազ-
դեցութիւն. միթէ անօթ է պաշտօն ուղղելը:
Ես կը բողոքեմ ՊԵԿԵԱՆ ԷՖ. ի դէմ, որ ոչ մի-
այն զիս պատարակել ուզեց իւր խօսքերովը,
այլ և ել երեսփոխանաց պատուին դարու, բնե-
րով որ կը պտրտին և քուէ կուզեն իրենց հա-
մար. ո՞վ կրնայ ընդունիլ այնպիսի պաշտօն-
եայ մը՝ որ գաղտնի կերպով պտրտի և քուէ
ժողով իրեն համար:

Handwritten text in German, possibly a list or account.	Handwritten numbers: 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100.
---	---



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ



ՄԵՓՐԱՊԵՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՐԱՊԵՆ



Կը ծախուի ի Գլխանատան Պատրիարքարանի , և կը դանուի
Եկեղեցեաց բանկալները :